

Իսրայելի արտաքին գործոց նախարար Շիսոն Փերեսը երկվ գիշեր Երուսաղեմի մեջ տեսակցություն մը ունեցաւ պաղեստինեան իշխանութեան ելեւմուտքի նախարար Սալամ Ֆայաթի հետ: 4 ամիսէ ի վեր առաջին անգամն է, որ կառավարական մակարդակի հանդիպում տեղի կ'ունենայ երկու կողմերուն միջեւ: Իսրայելացի պաշտօնատարներ հաղորդեցին, որ վարչապետ Արիէլ Շարոն կանաչ լոյս տուած է այս տեսակցութեան համար, պայմանաւ որ չարժարժուն խաղաղութեան ծրագրին կապուած հարցեր: Չհաղորդուեցաւ, սակայն, թէ ճիշդ ի՞նչ նիւթեր քննարկուած են հանդիպումին: Յայտարարուեցաւ, որ պաղեստինեիսրայելեան այս բանակցութիւնները պիտի շարունակուին:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՄԱՋՈՒԹՈՎ ԲԱՆՈՂ «ՎԱՆ»ԵՐՈՒ ԵՒ «ՄԻՆԻ-ՊԱՍ»ԵՐՈՒ ԿԱՐՈՐԴՆԵՐԸ ԲՈՂՈՔԻ ՄԵՑ ՅՈՅՅԵՐՈՎ ԱՆՇԱՐԺԱՅՈՒՅԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆ ՈՒ ԱՅԼ ՇՐՋԱՆՆԵՐ



Մազուլի թանգո ընդհատուած է «վան» երու «մինի-պաս» երու սեփականատէրերն ու վարորդները երէկ ց. ցեր կատարեցին բազմաթիւ շրջաններու մէջ, պատճառելով սաստիկ խճողումներ: Անոնք կը բողոքէին Յուլիս 15-էն սկսեալ իրենց գործունէութիւնը արգելող կառավարութեան որոշումին դէմ:

Մազուլի թանգո, Մեթնի եւ հարաւային արուարձանի մայրուղիներն ու ճամբաները փակուեցան աւելի քան հինգ ժամ եւ հազարաւոր ինքնաշարժներ անշարժացան ճամբաներուն վրայ:

Բազմաթիւ «վան» երէկ կէսօրէ առաջ ժամը 10:00ին օդակայանի ճամբուն վրայ գտնուող իրենց սենտիքայի կեդրոնատեղիին շուրջ համախմբուելէ ետք Ներքին Ապահովութեան Ուժերու խիստ հսկողութեան տակ իրենց փոխադրական լաւագործ ճամբայ ելան դէպի Պարպիլ, Թանգարան, Արդարութեան պալատ, Ֆիաթի կամուրջ, Նահրի կամուրջ, Քարանթինա, Տորա: Տորա հասնելով, ցուցարարներու մէջ մասը մտաւ «Մէրստէս» ընկերութիւն, հետաքրքրուելու նոր, պենզինով բանող շարժակի գիններով: «Տասը հազար ամ. տոլար» պատասխանը աւելի գրգռեց զանոնք եւ անոնք յառաջացան դէպի Նահրի Մոթ, ժամը 3ի պ, ուր նույնպէս այցելեցին «Հիւնտայ» եւ «Քիա» ընկերութիւններուն, որոնց շարժակներուն գինները շուրջ 5500 ամ. տոլար է:

Ապա, դէպի Պէյրութ ուղղութեամբ վերադառնալու միջոցին, ցուցարարները հանդիպեցան Պէյրութէն եկող ուղղութեան վրայ նմանօրինակ ցուցի: Երկու խմբակները տեղւոյն

ԿԱՆԽԱՆԱՍ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՆԹԱՇՈՂ ԿԸ ԶԱՇԻ ԹՈՒՐԲԻՈՅ ՓՈՒՆ ՎԱՐՉԱՊԵՏԸ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ԵՒ ԵՐԵՍՓՈՒՆԱՆՆԵՐ ՀՐԱԺԱՐԵՑԱՆ՝ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԵՒ ԵԼԵՒՈՒՏՔԱՆ ԼՈՒՐՁ ՏԱԳԵԱՊԸ ԸԱՏ ԱՒԵԼԻ ՍՐԵԼՈՎ

Թուրքիոյ կառավարական ընկերակցութիւնը մեծ հարուած ստացաւ երէկ, երբ անոր փոխ վարչապետը, 3 նախարարներ եւ 9 երեսփոխաններ հրաժարեցան, իսկ ուրիշներ կը պատաստուին նաեւ հրաժարելու:

Փոխ վարչապետ Հիւսամէթին Էօքթան, որ Թուրքիոյ երեք կուսակցութիւններէ բաղկացած ընկերակցութիւնը 3 տարիէ ի վեր միացած կը պահէր, երէկ յայտնած է, թէ կը հրաժարի կառավարութենէն եւ վարչապետ Պիլիք Էճելիթի կուսակցութենէն:

Էօքթան, որ Էճելիթի ամենէն սերտ խորհրդականը եղած է, դիւանագիտական նրբութիւններով կրցած էր խաղաղութիւն պահել կառավարական ընկերակցութեան անդամներ Այգայնական Գործի կուսակցութեան եւ Մայր Հայրենիք կուսակցութեան, ինչպէս նաեւ տնտեսութեան նախարար Քեմալ Տերվիշի հետ՝ տնտեսական բարեկարգումներու հարցով լարւածութեանը ընթացքին:

Թուրքիա եւ անոր ելեւտական շուկաները մեծ ցնցում արձանագրած էին արդէն երէկ, կառավարական ընկերակցութեան աջակողմեան անդամին կանխահաս ընտրութիւններու պահանջէն ետք:

Տնտեսագէտ Էմին Էօքթուրք յայտնած է, թէ վիճակը քառասուն է, «ծայրայեղ անորոշութիւն կը տիրէ, այն իմաստով, որ մարդ չի գիտեր, թէ յաջորդ օրը կամ նոյնիսկ յաջորդ ժամուն ի՞նչ պիտի պատահի»:

Շուկաները ունին այն մտավախութիւնը, թէ անկախ ընկերակցութեան ընթացքէ դուրս բերել Դրամական Միջակայքին Ֆոնտին կորակցութիւնը վայելող 16 միլիարտ տոլար արժողութեամբ տնտեսական փրկութեան ծրագիր մը եւ խոչընդոտման մարդկային իրաւանց մարդի բարեկարգումներ, որոնք կենսական են Թուրքիոյ Ե. Միութեան անդամակցութեան համար:

Յստակ չէ, թէ ի՞նչպիսի կառավարութիւն դուրս կրնայ գալ Նոյեմբերի կանխահաս ընտրութիւններէն, չորս Կիրակի օր պահանջած էր աջակողմեան Այգայնական Գործի կուսակցութեան ղեկավար Տերվիշ Պահչելի:

Ներկայիս, հարցախոյզներ ցոյց կու տան, թէ կառավարական այժմու ընկերակցութեան անդամներուն բոլորը կրնան չլազուրկ 10 առ հարիւրի համեմատութիւնը ապահովել՝ խորհրդարան մուտք գործելու համար: Մեծագոյն յաղթականը կրնայ ըլլալ իսլամական ԱԲ կուսակցութիւնը, որուն մտավախութեամբ կը մտնէ այս բանակցութեան:

Տնտեսութեան նախարար Քեմալ Տերվիշ Երկուշաբթի օր միջամտած է՝ լիրային օգնելու համար, մրցանիշ կտրող արժեւորումէ ետք: Թիրայիներէն հեռանալու պատճառ պէտք չէ ըլլալ, եթէ ներկայ կացութիւնը շատ չերկարի, ըսած է ան:

Թրքական թերթերը միաձայնութեամբ յայտնած են, թէ կանխահաս ընտրութեանց առաջարկը անակնկալ էր իրենց համար, մինչ շաբաթ մը առաջ ընկերակցութեան անդամ կուսակցութիւնները յայտարարած էին, թէ խորհրդարանը ճշդուած 5 տարիներու նստաշրջանը մինչեւ Ապրիլ 2004 պիտի աւարտէ:

ԻՐԱՆԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ Կ'ԱՅՅԵԼԵ ՀԱՅԱՍՏԱՆ

Եւրոպայ այցելութեան մը համար երէկ Երեւան հասաւ իրանեան պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Իրանի ուժանիւթի նախարար Հայպի Պիթարաֆի: Այցելութեան ընթացքին իրանեան պատուիրակութիւնը Հայկական կողմին հետ պիտի քննարկէ երկու երկիրներու ուժանիւթի ոլորտներու գործակցութեան խնդիրներն ու հեռանկարները: Իրանի ուժանիւթի նախարարի գլխաւորած պատուիրակութեան այցելութեան նպատակն է առաջին հերթին քննարկել «Ուժանիւթի ոլորտի գործակցութեան» մասին համաձայնագրի իրագործման ընթացքը: Նշեալ համաձայնագիրը ստորագրուած էր անցիկ տարի՝ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի իրան կատարած այցելութեան ընթացքին:

Կողմերը նաեւ պիտի քննարկեն նոյն բնագաւառէն ներս հայ - իրանական միացեալ ծրագրերու առնչուող բազմաթիւ հարցեր:



Երկու փոխ վարչապետները՝ Օքթան (ձախից) եւ Պահչելի (կերորոն), վարչապետ Էճելիթի կողքին՝ մամլոյ սաուլիսի պահուց

«Հիրիթի» օրաթերթը վայն երկրաշարժի մը անանցուցած է, իսկ «Ճիւմհիրիթի» թերթը՝ ոռումի մը, որ կը հարուածէ տագնապ դիմագրաւող Թուրքիան:

«Ռատիքայ» ըսած է, որ Պահչելի իր վէսքը բարձրացուցած է հիւանդ վարչապետ Պիլիք Էճելիթի դէմ:

Փոխ վարչապետ Պահչելի, որուն կուսակցութիւնը 550 աթոռ հաշուող խորհրդարանին մէջ 127 աթոռ ունի, այսինքն մէկ աթոռ նուազ քան Էճելիթի ժողովրդավար Չախ կուսակցութիւնը, Երկուշաբթի օր յստակ դարձուցած է, որ կատակ չ'ըներ:

Կուսակցութեան փոխ ղեկավար Քորայ Ալտին թղթակիցներու յայտնած է, թէ Պահչելի թելադրած է կուսակցութեան երեսփոխաններին ստորագրութեանց անհրաժեշտ թիւը հասցնել՝ Սեպտեմբեր 1ին խորհրդարանի արտակարգ ժողովին կայացման համար:

Ընդդիմադիր մեծագոյն կուսակցութեան ճիշդ Ուղիի բարձրաստիճան 4 անդամներ իրենց ձայնը միացուցած են կանխահաս ընտրութեանը կայացման համար: Իսկ ԱԲ կուսակցութեանը յայտնած է, թէ խորհրդարանը Օգոստոսին իսկ պէտք է ժողով գումարէ՝ Հոկտեմբերին ընտրութիւններու կայացման որոշում տալու համար:

ՌՈՒՍԻԱ ՀԱԿԱՀԱՅ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիրակի օր Ռուսիոյ Կրասնոարմէյսք քաղաքին մէջ պատահած են հակահայ բնույթի վայրագութիւններ: Քաղաքի ճաշարաններէն մէկուն մէջ ծագած վէճէ մը ետք մօտ 45 հոգի խուժած են հայերու տուններ եւ ծեծի ենթարկած՝ անոնց բնակիչները: Ցանցագործները պատճառած են բաւական մեծ աւեր: Ռուսիոյ Հայերու Միութիւնը հաղորդեց, որ Կրասնոարմէյսքի մէջ պատահած վայրագութեան հետեւանքով վիրաւորուած են 15 հայեր, ներառեալ՝ կիներ եւ երեխաներ:

Ռուսական լրատուամիջոցներ Կրասնոարմէյսքի դէպքերը ներկայացուցած են իբրեւ «զանգուածային խոշտանգում, որոնց մասնակցած են տեղացի բնակիչներ եւ հայ համայնքի անդամներ»: Ռուսական իրաւապահ մարմիններ պնդած են, թէ դէպքերը տեղի ունեցած էին կենցաղային պատճառներով:

Ռուսիոյ ներքին գործոց նախարարութեան պաշտօնատարներ «Իթար-Ռասս» յայտնած են, թէ բացուած է հետաքննութիւն եւ յանցագործներէն ոմանք յայտնաբերուած են:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶԱՌԵԱԿԻ ԺՈՂՈՎ՝ Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ ՄԷՋ

«Կովկասեան քառեակի» անդամ երկիրներու՝ Հայաստանի, Վրաստանի, Ռուսիոյ եւ Արարեւմտեան խորհրդարաններու ղեկավարներու հանդիպում մը տեղի պիտի ունենայ Յուլիս 15ին, Ռուսիոյ Ս. Փետրսպուրկ քաղաքին մէջ: Հանդիպումին ընթացքին պիտի քննարկուին շրջանին համար հրատապ բոլոր խնդիրները:

ՄԵԹԵՆԻ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՐՆԱ ՄԸՐ ԱՐԳԻՒՆՔՆԵՐՈՒ ԲԵԿԱՆՄԱՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑ

Մեթենի երեսփոխանական մասնակի ընտրությունները արդիւնքները բեկանելու դիմումը երկվ յղուեցաւ Մահմադարական խորհուրդին:

Արգարեւ, ընտրությունները թեկնածու Միրնա Մըրի լիազոր փաստաբան Անթուան Մըզէր երկվ ներկայացուց դիմումը: Ըստ լրատուական աղբիւրներու, դիմումը վեր առած է ընտրություններէն առաջ, անոնց ընթացքին եւ անոնց արդիւնքներու յայտարարման գործընթացին մէջ օրինազանցություններ, լրատուական-ապատեղեկատուական արշաւներ, խորհուրդէն պահանջելով չեղեալ համարել ընտրություններ եւ նոր ընտրություն կատարել:

ՈՒՍՈՒՑԻ ՉՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴՈՒԼ ԿԸ ՅԱՄԵՆԱՅ

Կրթական գետնի վրայ պետական ուսուցիչներու յայտարարած գործադուլը տակաւին ընթացքի մէջ է՝ պետական ուսուցիչներու խորհուրդին եւ կառավարության միջեւ երկխոսություններ չգոյութեան պատճառով:

Երկրորդական դասարաններու դասատու ուսուցիչներու խորհուրդը երկվ կէսօրէ ետք ժամը 5:00ին ժողով մը գումարեց Պէյրութի եւ Լեռնալիբանանի վարժարաններու երկրորդականի ուսանողներու ծնողներու խորհուրդին հետ, ԵՈՒՆԵՍԿՕ-ի կից պետական ուսուցիչներու խորհուրդի կեդրոնատեղիին մէջ:

Ժողովին ընթացքին խորհուրդը շեշտեց, որ հաստատ պիտի մնայ իր որդեգրած կեցուածքին վրայ:

ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ՖԻՆԻԼԻ ԿԵՅՈՒԹԵԱՆ 6 ԱՄԻՍՈՎ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄԸ

Լիբանանեան դիւանագիտական աղբիւրներ երկվ հաղորդեցին, որ արտաքին գործոց նախարարութիւնը յառաջիկայ 24 ժամերուն ՄԱԿի ընդհանուր քարտուղար Բոնֆի Անանի պիտի ներկայացնէ հարաւային Լիբանանի մէջ գործող ՄԱԿի խաղաղարար ուժերու կեցութեան վեց ամիս երկարաձգման պահանջ:

Նոյն աղբիւրներուն համաձայն՝ դիմումին մէջ նախարարութիւնը պիտի յիշեցնէ այդ ուժերու դերակատարութեան կարեւորութիւնը եւ խաղաղութիւնը մերժող իսրայէլի կեցուածքը:

Դիմումը նաեւ պիտի պահանջէ անփոփոխ պահել Ֆինիլի առաքելութիւնն ու անոր գինուորներուն թիւը:

ԼԻԲԱՆԱՆ - ԱՐԱՐԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ ՇԱՍԱԶԱՅՆԱԳԻՐ



Կը ստորագրուի համաձայնագիրը

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկվ յաջորդաբար ընդունեց ճարտարաբաններու եւ պաշտպանութեան եւ ներքին գործոց նախարարներ Ժորժ Աֆրամը, Խալիլ Հըրաուիին եւ Էլիաս Մըրը, եւ անոնց հետ քննարկեց տուեալ նախարարութիւններուն աշխատանքներն ու հարցերը:

Վարչապետ Հարիրիի հովանաւորութեամբ երկվ վարչապետարանին մէջ ստորագրուեցաւ Լիբանանի եւ տնտեսական բարգաւաճումի արաբական սնտուկին միջեւ համաձայնագիր մը, որուն հիմամբ սնտուկը 57 միլիոն տոլարի փոխատու-

թիւն մը կը կատարէ Պէյրութի ենթակառուցի աշխատանքներուն համար, մասնաւորապէս անդրեւի եւ ապակաւնած շուրի ցանցերու, ասֆալթապատումի, մայրերու, լուսաւորումի եւ երթելի նշաններու համար:

Համաձայնագիրը ստորագրեցին սնտու-

կի նախագահ Ապտըլ-լաթիֆ Եուսէֆ Համատ եւ շինարարութեան եւ բարգաւաճման խորհուրդի նախագահ Ժամալ Իթանի: Ներկայ էին վարչապետ Հարիրի, Էլեմուսֆի նախարար Ֆուատ Սիւնիորա եւ տնտեսութեան նախարար Պասէլ Ֆլէյխան:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԷ ԱՅԼ ԲԱԶՄԱԹԻ ԱՆՁՆԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հանրապետութեան նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երկվ ընդունեց նախկին երեսփոխան Միշէլ Մըրը եւ անոր հետ քննարկեց երկրին քաղաքական եւ տնտեսական հարցերը, ապա ընդունեց Ղովմի կուսակցութեան նախագահ Ժըպրան Արաձիի գլխավորութեամբ կուսակցական պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին աշխատանքի նախարար Ալի Քանսո եւ երեսփոխան Ասատ Հըրտան:

Արաձի բարձր գնահատեց նախագահ Լահուտի անպիշող կեցուածքը իսրայէլեան եւ ամերիկեան ճնշումներուն դիմաց եւ յայտնեց, որ անոր հետ խօսած է տնտեսական եւ ելեմտական տագնապները յաղթահարելու միջոցներուն շուրջ ազգային երկխոսութիւն ունենալու անհրաժեշտութեան մասին: Քննարկումի նիւթ դարձաւ արտերկրի լիբանանացիները միա-

կամ եւ ազգային սկզբունքներու շուրջ համախումբ պահելու հրամայականը:

Երեսփոխաններ Քալալան Իսա Խուրի եւ Ժըպրան Թոքը ընկերակցեցան Ժըպրան Խալիլ Ժըպրանի յիշատակի սորընտիր յանձնախումբին, որ նախագահ Լահուտի ներկայացուց իր ծրագիրները:

Նախագահը երկվ նաեւ ընդունեց նախկին նախարար Էտան Ռըպըր, նախկին երեսփոխան Իշէյա Խապէնը եւ Կիպրոսի մարոնիներու առաջնորդ Պուրոս Ժեմալը, որուն հետ քննարկեց յանազնիկ շարք իր Կիպրոս տալիք այցելութեան կապուած հարցեր, ապա ընդունեց Լալընկ երիտասարդ-

կան կազմակերպութեան պատուիրակութիւն մը: Գրագետ Քարոլ Տաղէր Ֆրանսական Փլոն հրատարակչատան պատասխանատուներու հետ նախագահ Լահուտի ներկայացուց իր վերջին գործը:

Մէնտական Արաբիոյ գաղտնի սպասարկութեանց պետ Նաուաֆ Պըն Ապտըլ Ապի Իշխանը, որ Պէյրութի արաբական վեհաժողովին ընթացքին անհանգրստացած էր եւ Պէյրութ մնացած՝ ապաքինումի համար, անցեալ շաբաթ Ս. Արաբիա վերադարձին նախագահ Լահուտի յղեց հեռագիր մը, որուն մէջ շնորհակալութիւն յայտնեց իր գտած հոգատարութեան համար: Նախագահ Լահուտ անոր պատասխանեց հեռագիրով մը, ուր շնորհակալութիւն յայտնեց անոր ջերմ վզացումներուն համար եւ անոր մաղթեց քաջառողջութիւն:

ԿՈՒՂՈՒԻ

● Ոսկերիչներ (սետեր) եւ աղամանդաշարներ (գիրքօճ): Ըճ. 01 - 890951:

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՔԱԺԻՆ

● Ճամբորդութեան պատճառով, 140 քառ. մետր տարածութեամբ, գեղատեսիլ դիրք, բնակարանի, գրասենյակի կամ դարմանատան յարմար, Պաուլի, «Կալերի Իթի-հատ»-ի մօտ, հեռ. 03-226435 եւ 01-899718:

ԲԱՐԳԵՆ ՓԱՓԱԶԵԱՆ ՍԱՆԵՐՈՒ ՖՈՆՏԻՆ

● Լուսին Թեմիքեանի մահուան առիթով, Ազգային Ե. Մանուկեան ընդհի ուսուցչական կազմը եւ պաշտօնէրէնը՝ 100,000 Լ.Ո.:

16 ԵՒ 17 ՅՈՒՆԻՍԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երկվ երեսփոխանները հրաւիրեց Երեւանի 16 եւ 17 Յունիսին գումարելու օրէնսդրական լիազուժար նիստ մը, քննարկելու եւ վաւերացնելու համար օրակարգի վրայ տեղ գտած օրինագիծերն ու օրէնքի առաջարկները:

Խորհրդարանի նախագահը երկվ ընդունեց Կեդրոնական Դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէն եւ անոր հետ քննարկեց երկրի տնտեսական եւ ելեմտական վիճակը, ինչպէս նաեւ մօտ օրէն շրջանի մէջ Կեդրոնական Դրամատան մասնաճիւղ մը բանալու հարցը:

Իրանի դեսպան Մոհամէտ Ալի Սուպհանի Պըրրիի հետ տեսակցելէ ետք յայտնեց, որ Իրանի նախագահ Մոհամէտ խաթեմի մօտ օրէն պիտի այցելէ Լիբանան: «Ամերիկեան եւ իսրայէլեան սպառնալիքները թէ-եւ նորություններ մը չեն, բայց կը թունաւորեն շրջանին միջոցները եւ բոլոր յաւելեալ գործակցութեամբ ու զօրակցութեամբ պէտք է դիմագրաւենք զանոնք», ըսաւ ան:

ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏԻ ԱՌԵՏՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ ԲՆՆԱՐԿԵՑ ԶԲՕՍԱՇՐՋԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻՆ ԿԱՊՈՒԱԾ ՀԱՐՅԵՐ

Պուրճ Համուտի առեւտրականներու միութիւնը Փոլ Ալանեանի գլխավորութեամբ գումարած իր ժողովին քննարկեց ամառնային կրօնաշրջութեան եղանակի առեւտրական եւ տնտեսական առումով յաջողութիւնը ապահովելու միջոցները:

Ժողովին ետք հրապարակուած հաղորդագրութիւնը ողջունեց պատկան նախարարութիւններու ի գործ դրած ճիգերը եւ կոչ ուղղեց, որ անոնք ամբողջացնեն փողոցներու լուսաւորումը, երթելի կանոններու եւ կենսալորտի մաքրութիւնը պահպանելու միջոցառումները, պանդոկներու եւ երթելի սակերու նուազումն ու անոնց վրայ հսկողութիւնը, որպէսզի այս եղանակին կրօնաշրջիկները առաւելագոյն չափով հանգիստ եւ գոհ ըլլան:

ԻՍԱՍ ՖԱՐԷՍ ԿՈՉ ԿՈՒՂԴԷ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ

Փոխ վարչապետ Իսամ Ֆարէս կոչ ուղղեց երկրի տնտեսական հարցերը անջատելու քաղաքական քաջութեամբ եւ անձնակցին նահանջին, որպէսզի արտաքին ներդրուածներուն աւելի չպատասխանող միջոցները ստեղծուի եւ կազմուի տնտեսական կեանքը:

«Միջին Արեւելքի ընդհանուր վիճակի Լիբանանի վրայ ունեցած ժխտական անդրադարձները կարելի է դիմագրաւել միայն ներքին ճակատի վրայ միասնութեամբ եւ ընդհանուր համախորհութեամբ», ըսաւ ան:

Փոխ վարչապետը երկվ ընդունեց Բորնէթ Շը-հուանի հանդիպումի անդամ երեսփոխաններ Ֆարէս Սուլայման ու Մանսուր Ղանէմ Պոնը, որոնք ներկայացուցին հանդիպումի տեսակէտը Լոս Անճելըսի մարոնիներու ժողովին գծով:

Ֆարէս նաեւ ընդունեց պետական նախարարներ Թալալ Արաբիան ու Նազիհ Պալտունը եւ երեսփոխաններ, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ Ութմանիոյ եւ Պուլկարիոյ դեսպանները:

ԿՈՒՂՈՒԻՆ JOB OPPORTUNITY

● Հազուադէպ վաճառուող մը կարիքը ունի փորձառու վաճառող օրիորդներու եւ երիտասարդներու մը վճարումի լաւ պայմաններ: Դիմել հեռ. 01-839432 12:00-ը 4:30 p.m.:

TANIA TRAVEL
Sodeco Square - Rue de Damas
Tel: (02) 618555/6/7/8 - Fax: (01) 618561
Rue Sidani - Face Cinema Jeanne d'Arc
Tel: (01) 739670/82/3/4 - Fax: (01) 340473
Website: www.taniatravel.com
Site et unopré ԾորՓ Գեքրաքեան

CHARTERS

| | | |
|--------------------------------------|----------------------|--------|
| PALMA DE MALLORCA | 8 jours | \$ 720 |
| ESPAGNE, PORTUGAL & MAROC | 7 prog. 8a' 15 Jours | \$ 955 |
| RHODES | 8 jours | \$ 355 |
| MYKONOS | 8 jours | \$ 500 |

Départs tous les Mardis / Départs tous les Lundis

ASHJIAN TOURS

Առաջին անգամ ըլլալով արագընթաց ցաւով 190 վայրկեանէ կիՊՐՈՒՍ 3 ՕՐ. Ա. կարգի պանդոկ նախաձայնումով - 118\$

4 օրը 140\$ - 7 օրը 192 \$Ամէն Երեւանի եւ Ուրբաթ օրերը

8 օր CALYPSO զբօսանալով, Կիպրոս, Ռոտտո, Արեւ եւ Յունական կղզիներ, վրձները ձիւ, լան ճաշերով եւ ամէն գիշեր տարբեր յարմարներ

Հայաստան 9 Օգոստոս - 15 օրը 780\$, 22 Օգոստոս - 15 օր 800\$, իսկ մէկ շաբաթ 525\$

VARNA մէկ շաբաթ 285\$, երկու շաբաթ 385 \$

Ամէն օր մեր գրասենյակին առջեւն առաւուս եւ երկոյ շքեղ օրաքաղցրով Դամասկոս միայն 6,000 Լ. ոսկի - Հալէպ 10,000 Լ. ու, առաջնակարգ հիւրապարտութիւն

Ամէն Կիրակի Դամասկոս - Սեյտայա - Պոլտոս միայն 13\$ Կանա, Սայտա, Սուր 8\$ - Ֆարայա, ժախք 8\$

ԱՇՅԱՆ ԹՈՒՐԿ հեռ. 01-261177, 240654 03-233978, գիշերը 01-258887 Amitours Tel. 01-898226 եւ 03-292600

Balkan Holidays
TRANSLITEX TOURS
ԴԷՊԻ ՎԱՌԵԱ ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐՈՒ 36 ՏԱՐՈՒՆ ՓՈՐՋԱՌՈՒԹԻՒՆ

Varna Summer

2եր քաղցրեմը զարմարեց մեր սեփական օդանւորութիւնը նախադրուած ակեր 295 \$ էն սկսեալ /ներառեալ շրջապատուի հիմնական ծախսերը/

Balkan Holidays
VARNA EXPERT No.1
Look after No. 1. Let No. 1 Look after you.
CORNICH MAZRAA WAKF ROUM CENTER - BANK AUDI
TEL: /7304553 - 304563 FAX: 9611/310424 BEIRUT - LEBANON

ՀԱՅ ԱՒԵՏ. ՔՈՒԼԵՃ
(ՄԵՔՍԻԵ ՓՈՂՈՑ, ԳԵՆ. 349816)
2002-2003 ՏԱՐԵՇՐՋԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 2002-2003 տարեշրջանին Հայ Աւետ. քուլէճը պիտի ունենայ բողոքեչին 12րդ պաքալօրէի դասարան:
- Նորեկ աշակերտները պարտին կանխա դիմել: Նորեկներուն դիմումները կ'ընդունուին ամէն օր, կէսօրէ առաջ ժամը 9:30էն 12:30, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:
- Կրթնապաստի դիւրութիւններ կը տրուին ուսումնապէս փայլուն եւ նիւթական դժուարութիւն ունեցող աշակերտներու:
- Բոլոր շրջաններու համար օթոպիսի սպասարկութիւնը ապահովուած է:
- Ամառնային շրջանին դպրոցին գրասենյակը բաց է Յուլիս եւ Սեպտեմբեր ամիսներուն Երկուշաբթիէն Ուրբաթ, իսկ Օգոստոսին բաց է միայն Չորեքշաբթի օրերը:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

STUDIO Lantern

● Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ

Ըճ. 01-266866
ԵՒ 03-695399

Vivacite
ՄԱՐՁՈՒՄԻ ԵՒ ԳԵՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԵՂՈՒՆ

ժըտէյտի քաղաքապետարանին մօտ, Մաքստոնալտոնի դիմաց, Սեմբըր «Շարա»
Բ. յարկ: Ըճ. (03) 587077:

ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱԲԱԳՈՅՆ ՆՈՒԵՐԸ ԱՅՍ ԱՄԻՍ ՅԱՏՈՒԿ ԳԻՆ ԲՈՒՆՈՐ Ա ՏԱՌՈՎ ՍԿՈՂ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ. ԿԵՍ ԺԱՄՆՈՑ VIDEO CLIPՆԵՐ ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ, ՍԱԿԱՆՈՒՆՈՎ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԿԱՐՆԵՐՈՎ

Դիմել ԱՐԱ ԶԷԷԺԵԱՆ ՇԱՍ.
Ըճ. 01 / 261696, 03 / 250518

TANIA TRAVEL
Sodeco Square - Rue de Damas
Tel: (02) 618555/6/7/8 - Fax: (01) 618561
Rue Sidani - Face Cinema Jeanne d'Arc
Tel: (01) 739670/82/3/4 - Fax: (01) 340473
Website: www.taniatravel.com
Site et unopré ԾորՓ Գեքրաքեան

CHARTERS

| | | |
|--------------------------------------|----------------------|--------|
| PALMA DE MALLORCA | 8 jours | \$ 720 |
| ESPAGNE, PORTUGAL & MAROC | 7 prog. 8a' 15 Jours | \$ 955 |
| RHODES | 8 jours | \$ 355 |
| MYKONOS | 8 jours | \$ 500 |

Départs tous les Mardis / Départs tous les Lundis

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՕՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ԵՒ ՊԻՔՖԱՅԱՅԱՅԻ ՎԱՆՔԵՐՈՒՆ ՄԷՋ ՀԱՆԴԻՍԱԴՈՐԱՊԵՍ ՆՇՈՒԵՅԱԻ

Կիրակի, 7 Յուլիս 2002ին, եպիսկոպոսական հանդիսատեսը Ս. պատարագ մատուցուցավ Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարին մէջ, ինչպէս նաեւ Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ, նշելու համար Յիսուսի Այլակերպութեան տօնը: Արամ Ա. կաթողիկոս Պիքֆայայի մէջ նախագահեց եկեղեցական արարողութեանը: Այս առիթով պատարագեց եւ քարոզեց Տիրայր եպս. Փանոսեան: Իսկ Անթիլիասի մէջ պատարագեց եւ քարոզեց Վարդան արք. Տեմիրճեան: Պատարագիչ սրբապան հայրերը անդրադարձան Այլակերպութեան խորհուրդին, որ մեր եկեղեցւոյ հինգ մեծ տօներէն մէկն է: Սրբապան հայրերը բացատրեցին նաեւ նոյն տօնին կապուած Վարդավառի ասանդութիւնը, որ վարդերով ջուր սրկելու հայ հին հեթանոսական ասանդութիւններէն մէկը ըլլալով, Ս. Գրիգոր Լուսավորիչի կողմէ միացուած էր այս տօնին:

Անթիլիասի եւ Պիքֆայայի մէջ Ս. պատարագի երգեցողութիւնները կատարուեցան Դպրեւանքի երգչախումբին կողմէ, իսկ յընթացք Ս. պատարագի հաւատացեալներ հաղորդուեցան, հետեւելով մեր հայրերու հաստատած ասանդութեան՝ հինգ տաղաւար տօներուն անպայմանօրէն հաղորդութիւն ստանալու:

ՆԱԽԱՐԱՐ ՔԱՐԱՍ ԾՐՋԱՊՏՈՅՏ ՄԸ ԿԱՏԱՐԵՑ ԲԵՍՐՈՒԱՆԻ ՄԷՋ

Ջրօսաշրջութեան նախարար Քարամ Քարամ երէկ Քերտուան կատարած իր շրջագոյտին ընթացքին Պեքրքէի մէջ այցելեց մարտիններու նասրալլա Պուլթրոս Սֆէյր պատրիարքին: Նախարար Քարամի կընկերակցէին նախարարութեան ընդհանուր տնօրէն Նատա Սարտուբ, երեսփոխան Նամմալա Ապի Նասրը եւ Քերտուանի նահանգապետ Ռեմոն Հաթթի:

Հանդիպումին ընթացքին նախարար Քարամ յայտնեց, որ Քերտուան իր այս այցելութիւնը կ'իյնայ Լիբանանի տարբեր շրջաններուն մէջ զբօսաշրջութեան ծիրը արժեւորելու, աշխուժացնելու եւ արդիւնաւորելու բաղադրանքներէն ներս: Քարամ շեշտեց, որ զբօսաշրջիկները անպայման եւ առաջին հերթին պէտք է այցելեն Պեքրքէ, «որովհետեւ ան կը ներկայացնէ ոչ միայն Քերտուանի դարպասը, այլեւ ազգին դարպասը, իսկ Սֆէյր պատրիարքը կը նկատուի Լիբանանի ազատարար մը եւ պաշտպան մը»:

Քարամ նկատել տուաւ, որ Քերտուան շրջանի պահանջները պիտի ներկայացուին զանոնք տրամադրող համապատասխան տնօրէնութիւններու, որպէսզի ոչ մէկ հարց արգելք հանդիսանայ շրջանի բարգաւաճման գործընթացին:

Ապա նախարար Քարամ իր շրջագոյտը շարունակեց ուղղուելով Աշթուր, ուր այցելեց բաղադրանքներու եւ հանդիպում մը ունեցաւ բաղադրանքներու Ռեզքի եւ բաղադրանքներու խորհուրդի անդամներուն հետ:

Քարամ այցելեց նաեւ Ֆէյթուր, Ռէյֆուր, Բըլէյաթ, Աթալիթուր եւ Չուբ Միքայէլ շրջանները եւ հանդիպեցաւ իւրաքանչիւր շրջանի բաղադրանքներին հետ եւ քննարկեց անոնց պահանջները:

Անդրադառնալով երկրի տնտեսական վիճակին, նախարար Քարամ կացութիւնը որակեց դժուար բայց ոչ անկարելի, շեշտելով, որ յաջող զբօսաշրջութեան մարզ մը ստեղծելու համար պէտք է բոլորը գործակցին:

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐՈՒԹԵՐԸ

8 Յուլիսի տեղական մամուլը իր առաջին էջերով լուսարձակի տակ առած է վարչապետ Հարիրիի Եգիպտոս այցելութիւնը, տնտեսական ստիպողական վիճակ յայտարարելու խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի պայթեցուցած «ոռմբ»ը, ինչպէս նաեւ պաղեստինեան հարցի վերաբերող վերջին պարզացումները:

«Տիար» օրաթերթը վարչապետին այցելութիւններուն մասին գրած է. «Հարիրիի սեփական պահանջներէն ելնելով, որ վերջ տրուի Ռախիտ Պըն Թալալ իշխանին Լիբանանի մէջ վարած քաղաքական գործունէութեան յատակ չէ, թէ ի՞նչ պիտի ըլլայ սեփական պահանջներուն պակասը եւ ի՞նչ պիտի ըլլայ Ռախիտ իշխանին դիրքը»:

«Բիֆահ Արապի» օրաթերթը նշած է, թէ Սէնտական Արաբիայի վերադարձին, վարչապետ Հարիրի յայտարարած է, թէ սեփականները պիտի մասնակցին «Փարիզ - 2» ժողովին:

Թերթերը անդրադարձած են Սուրի մէջ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի ելոյթին՝ ծիսատի հողագործի մեծարման Ը. փառատօնին: Ըստ թերթերուն, ան տնտեսական ահապանգային վիճակ յայտարարած է եւ կոչ ուղղած է վերջ տալու ներքին հաշիւներու բախումին ու փոքր պատերազմներուն:

Թերթերուն քաղաքական բաժնի յատկանշական լուրերուն կարգին էր նաեւ Մեքէի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն վերաբարձումը: Ըստ թերթերուն, Միշէլ Մըր սահմանադրական դատարանին մօտ բո-

ղոք պիտի ներկայացունէ Կապրիէլ Մըրի ընտրութեան անօրինականութեան դէմ: Այս քաղաքական խորագիրներու կարգին, «Սաֆիր» գրած է. «Անցեալ շաբաթ Լիբանան այցելած ամերիկացի քոնկրետէն Կրահամ յայտարարեց, Նախքան Սատամ Հիւսէյնը վարստելու մասին մտածելը, անհրաժեշտ է Լիբանանի եւ Սուրիոյ մէջ ահաբեկիչներ պատրաստող կայաններու հարցը լուծել»:

«Պայրաք»-ի համալուրիններուն մասին գրած է. «Նախագահ Լախուր կը շեշտէ, որ սեփականաշնորհման որեւէ գործընթացի մէջ պէտք է առաջնահերթ կերպով պաշտպանուին պետութեան շահերը. վեց ընկերութիւններ պատրաստականութիւն յայտնած են մասնակցելու քիշալիս հեռաձայնի անուրդին»:

«Տիար» գրած է, թէ Փաղանգաւոր Կուսակցութեան Սմիլ Ժեմալէլը արտաքսելու որոշումը չկայացաւ երէկ գումարուած խորհրդակցական հանդիպումին ընթացքին, որովհետեւ քաղաքական դիւանի կարգ մը անդամներ բացակայ էին ժողովին:

«Լիուա»-ի համաձայն, «Օմար Քարամէ յայտարարեց, թէ երկխօսութիւնը նախագահ Լախուրի պատասխանատուութիւնն է. արգելք չկայ, որ նոր կառավարութիւն մը կազմուի Ռաֆիք Հարիրիի ղեկավարութեամբ. Թաէֆի ժողովին ի վեր թրիփոլին է ամբողջ Հիւսիսը անտեսուած են. մեր կազմած համախմբումը բարգաւաճման կարկ տալու համար է կազմուի Ռաֆիք Հարիրիի ղեկավարութեամբ. Թաէֆի ժողովին ի վեր թրիփոլին է ամբողջ Հիւսիսը անտեսուած են. մեր կազմած համախմբումը բարգաւաճման կարկ տալու համար է կազմուի Ռաֆիք Հարիրիի ղեկավարութեամբ»:

Լիբանանեան օրաթերթերու գլխաւոր լուրերու կարգին էր նաեւ Կիրակի օր կայացած Լիբանանի Ռալիին, որուն ընթացքին մեծ յաղթանակ ապահովեց Ժան Փիէր Նասրալլա: Թերթերը նշած են, թէ Ռալիին ընթացքին ինքնաշարժի մը արկածին պատճառով մահացած է 14ամեայ պատանի մը եւ ուրիշներ վիրաւորուած են՝ Ժիպէյի շրջանին մէջ:

Միջազգային լուրերու կարգին թերթերը գրած են, թէ պաղեստինեան իշխանութիւնները կը մերժեն Այսրլորդանահի ներքին Ապահովութեան Ուժերու հրամանատարին՝ Ժըպ-

րիլ Ռաժուպի պաշտօնակրուծը եւ անոր փոխարէն ուրիշի մը նշանակումը: Ըստ թերթերուն՝ այս առնչութեամբ բողոքի ցուցեր տեղի կ'ունենան գրաւեալ հողերուն վրայ: Այս մասին «Բիֆահ Արապի» գրած է. «Եսաէր Արաֆաթի վերջին որոշումներուն դէմ ըմբոստութիւնը կը հասնի գաղտնի սպասարկութեան շրջանակներուն. Թայրաուի կը հերքէ զինք պաշտօնակրելու մասին լուրերը, իսկ Ռաժուպ արաբական շրջանակներուն մէջ աշխատանք կը տանի»:

Շրջանային գետնի վրայ, թերթերը գրած են, թէ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ Ռաշիւկընէն պահանջած է շրջանին մէջ քաղաքական հաւասարակշռութեան պահպանում:

«Սաֆիր» օրաթերթը իր առաջին էջով գրած է, թէ սիւտայէ տառապողներուն թիւը 10 տարիներու ընթացքին 40 միլիոնէն հասած է 100 միլիոնի: Ըստ թերթին՝ այս մէկը մեծ վտանգ կը սեպուի մարդկային բնականոն կեանքին համար:

Լիբանանեան ներքին կեանքին մասին թերթերը յայնօրէն անդրադարձած են Ռամի Իրանիի մահուան քառասունօրեայ առիթով տեղի ունեցած հոգեհանգստեան պաշտօնին: Թերթերը գրած են, թէ պիտի սկսին Սուր - Մաքուր ճամբուն շինարարութեան աշխատանքները: «Անուար» օրաթերթը իր ներքին էջերով յայնօրէն անդրադարձած է Լիբանանեան փառատօններուն, անոնց կշիռին եւ անոնց ունեցած դերակատարութեան՝ Լիբանանի վրօսաշրջութեան պարզացման եւ բարգաւաճման մէջ:

«Նահար» օրաթերթը յատուկ ուսումնասիրութեամբ մը անդրադարձած է Հարալի մէջ տարուելիք հողագործութեան եւ այլպէս բնագաւառներու կարգացման վերաբերող ծրագիրներուն: Ըստ թերթերուն՝ 52 պանակաւ ծրագիրներ պիտի գործադրուին 25 շրջաններու մէջ:

«Սաֆիր» օրաթերթը իր ներքին էջերով հրատարակած է Հարալի մէջ Գտնուող Շքիֆի բերրի վերականուցման եւ վերանորոգման մասին ծրագիր մը:

ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՕՄԻ ՈՐԲԵՐՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԱՍՆԱՄԵԱԿ

Հայ Օգնութեան Միութեան Որբերու Խնամակալութեան Ծրագրի Տասնամեակի տօնակատարութիւնը (բարձր հովանաւորութեամբ եւ մասնակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռոպէրթ Քոչարեանի) տեղի պիտի ունենայ 18 Սեպտեմբեր 2002ի առաւօտեան ժամը 11:00ին, Երեւանի Կարէն Տեմիրճեան մարզադահլիւն մէջ:

Այս առիթով, ՀՕՄԻ Կեդրոնական Վարչութիւնը կը հրաւիրէ խնամակալները՝ ներկայ գտնուելու այս հանդիսութեան: Անոնք, որոնք կը փափաքին մասնակցիլ, կրնան դիմել իրենց շրջաններու ՀՕՄԻ գրասենեակները՝ ստանալու համար հարկ եղած տեղեկութիւններն ու մանրամասնութիւնները:

8 Յուլիս, 2002

ՎԵՐԱՄՈՒՏ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՄԼԵԱՆ ԹԱԹԻԿԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՆ

Հայ Աւետարանական Ծանօթան Թաթիկեան Երկրորդական Վարժարանի հոգաբարձութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, թէ 2002 թուարեշրջանի վերամուտին վարժարանը կը վերաբանայ Երկրորդական Գ. դասարանը (Bacc. Life Science):

Արձանագրութիւն Արձանագրութիւնները պիտի սկսին Երկուշաբթի, 2 Սեպտեմբեր 2002ին: Արձանագրութեան համար վարժարանի գրասենեակը բաց պիտի ըլլայ Երկուշաբթիէն Ուրբաթ՝ առաւօտեան ժամը 9:00էն 12:00:

Վերաքննութիւն Կերաքննութեան կարօտ աշակերտներ պարտին ներկայանալ վարժարան 11 13 Սեպտեմբեր առաւօտեան ժամը 9:00ին:

Վերամուտ Ա. «Պրեովէ» եւ Երկ. Գ. կարգի աշակերտներ իրենց դարձնաքցը կը սկսին Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր առաւօտեան ժամը 8:00ին:

Բ. Մնացեալ բոլոր կարգերու աշակերտներ իրենց դարձնաքցը կը սկսին Երկուշաբթի, 30 Սեպտեմբեր առաւօտեան ժամը 7:30ին:

Գրասենեակի ժամեր Ա. Յուլիս ամսուան ընթացքին գրասենեակը բաց պիտի ըլլայ Երկուշաբթիէն Ուրբաթ, առաւօտեան ժամը 9:00էն 12:00:

Բ. Օգոստոս ամսուան ընթացքին գրասենեակը բաց պիտի ըլլայ ամէն Երեշաբթի առաւօտեան ժամը 9:00էն 12:00:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԾՐՋԱՊՏՈՅՏՆԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Վան - Մուշ - Անի Աղբամար - Կարս - Արարատ...

\$985 (Full Board)

Օգոստոս 23 - Սեպտեմբեր 1 (10 օր)

Ձեր տեղերը անպահովելու համար դիմել ANSER TOURS հեռ. 01-5620445 01-562870-1

Աւետիս Գալիպեան, հեռ. 03-283347

ԵՐԹԵՒԵԿԸ ՕԳՆԱԿԵՐՈՎ

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ONE SECOND IS ENOUGH... Արկածը կը Պատահի Երկվարկանի Մը Մէջ...



...BUT WE USE THEM ALL. ...ԻՍԿ ՄԵՔ ՆԵՐԿԱՅ ԵՔ ԱՄԵՆ ԵՐԿՎԱՐԿԱՆ.

ԱՖՀԻԼ AFHIL

Աֆիլ-ի Ենթ, Բ. Յարկ, Գեռ. եւ Յարկ. (01) 262231-242556-242557
Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

IGOL MOTOR OIL FUEL CARD

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԿՈՂՁՈՒՆԷ
ՈՃՐԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԱՏԵԱՆԻՆ ՀԻՄՆՈՒՄԸ

Երոպայի Հայ Դատի Յանձնախումբը շարքավերջին հաղորդագրությամբ մը ողջունեց Ոճրային Միջազգային Ատեանի հիմնումը, որ պիտի դատե պատերազմի ոճրագործները, մարդկութեան դեմ ոճիր գործած եւս ցեղասպանութիւն կատարած անհատները:

Յանձնախումբի ատենապետ Հիլտա Չոպոյեան յայտարարեց. «Այս մէկը յաղթանակ մըն է մարդկային իրաւանց պաշտպաններուն համար, որոնք երկար ատենէ ի վեր կը սպասէին ատեանի կազմութեան. հակառակ պետութիւններէ եկած ընդդիմութեան, կասկած չունինք, որ հաստատուած ատեանը պիտի օգնէ քանդելու այն լուսնային պատերազմը, որ բարձրացած է արդի ժամանակներու ամէնէն ահարկու ոճիրներուն դէմ»:

Չոպոյեան շարունակեց՝ ըսելով. «Կը ցաւիմք սակայն, որ կարգ մը պետութիւններէ, ներառեալ Թուրքիայէն, եկած ճնշումները պատճառով ատեանը լիազօրութիւն պիտի չունենայ դատելու անցեալի այն ճիւղերը, որոնք երբեք միջազգային արդարադատութեան սեղանին չեն բերուած: Միջազգային մասնագետներ՝ վկայակոչելով Չոպոյեան դիտելու տուաւ, որ Հայկական Ցեղասպանութեան, ինչպէս նաեւ Քամպուտիոյ ցեղասպանութեան անպատիժ մնալը նորաճող ոճիրներ քաջալերեց:

Յանձնախումբին ատենապետը յայտարարեց նաեւ, որ՝ «Եթէ միջազգային համայնքը անցեալին իր պարտականութիւնը չէ կատարած ցեղասպանութիւններու հեղինակները արդարադատութեան յանձնելով, նոյնը չի կրնար ընել այսօր: Երոպայի Խորհրդարանի եւ Երոպական Խորհրդարանի նման միջազգային ժողովրդավար հաստատութիւններու պարտականութիւնն է ոճրային անցեալ ունեցող պետութիւններու յիշեցնել, թէ պատասխանատուութիւն ունին նաեւ չունին եւ հատուցումի իմաստով»:

Նշեցք, որ Երոպայի Հայ Դատի Յանձնախումբը վերջերս Երոպայի ապագային մասին կատարուած միջազգային խորհրդածրոյցի մը ընթացքին առաջարկած էր հիմնել Երոպական ոճրագատ ատեան մը, որ հետագային մարդկութեան դէմ գործուած պատերազմական ոճիրները եւ գանձեր ուրացողները: Այս ատեանին լիազօրութիւնները յետագարած ուժ պէտք է ունենան: Յանձնախումբը առաջարկած է նաեւ, որ Երոպական Միութեան անդամակցող պետութիւնները նորահաստատ Ոճրային Միջազգային Ատեանի հաստատման փաստաթուղթը ստորագրելու պարտաւոր ըլլան՝ իբրեւ անդամակցութեան նախապայման: Թուրքիա այս երկիրներու շարքին է:

ՔԱՆԱՏԱՅԻ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ
ՈՐՈՇՈՒՄԸ՝ ՀԱՅ ԴԱՏԻ
ԵՐԿՐԱՍԵՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ
ԱՐԴԻՒՆԱՒՈՐՈՒՄԸ



Բանաձեւին յաջողութեան մէջ դերակատար ծերակուտակաճներ՝ Սթլաքուի, Սաիտո, Անտորշաք, Սթանքըն եւ Փրիտոնո

Քանատայի Ծերակոյտին կողմէ Հայկական Ցեղասպանութեան 13 Յունիսի ճանաչումի որոշումը կը շարունակէ իր արձագանքները գտնել մամուլին մէջ: Քանատայի մեր պաշտօնակից «Հորիզոն»-ը իր վերջին թիւին մէջ կ'անդրադարձնայ որոշումին նախապատրաստութեան եւ քուէարկութեան վերջին պահուն կատարուած աշխատանքներուն: «Հորիզոն» կը նշէ, որ բանաձեւին քուէարկութիւնը նախատեսուած էր Ծերակոյտի 11 Յունիսի

ԹԻՒ 44 ԲԱՆԱՉԵՒԸ
«Քանատայի Ծերակոյտը կոչ կ'ուղղէ կառավարութեան, «Որպէսզի ճանչնայ Հայկական Ցեղասպանութիւնը եւ դատապարտէ որեւէ փորձ, որ կը միտի խեղափոխել պատմական ճշմարտութիւնը կամ արտաքին տարողութիւնը կը փորձէ ներկայացնել իբրեւ նուազ քան ցեղասպանութիւն»:
«Որ այսուհետեւ Քանատայի կառավարութիւնը ամէն տարուան Ապրիլ 24ը հռչակէ 20րդ դարու առաջին ցեղասպանութեան գոհ՝ 1,5 միլիոն հայերու յիշատակման օր»:

բուրիս եւ բանաձեւին զօրակցած բոլոր ծերակուտակաճներուն:
Քանատայի Ծերակոյտին կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը արդիւնքը եղած է Հայ Դատի յանձնախումբերու հետեւողական աշխատանքին: Վերջին ամիսներուն յանձնախումբերու աշխատակիցներ տեսակցած են 30է աւելի ծերակուտակաճներու հետ՝ անոնց փոխանցելով յատուկ թղթածրարներ, վաւերագրական թուղթեր, գրքոյկներ եւ զանազան նիւթեր: 9 եւ 10 Յունիսին անոնք յատուկ յուշագիրներ յանձնած են Ծերակոյտի անդամներուն, իսկ 11 Յունիսին, հեռաձայնային կապով իւրաքանչիւր ծերակուտակաճին անոնք խնդրած են աջակցութիւն եւ դրական կեցուածք արտայայտել բանաձեւին:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՏԱԳՆԱԴ

ԱԼԻԵՒԻ «ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄՆԵՐԸ»
ՔՈՉԱՐԵԱՆԷՆ ԱԻԵԼԻ ԻՐԵՆ ԿԸ ՎՆԱՍԵՆ

Որքան կը մօտենան Հայաստանի եւ Ազգայնականի նախագահական ընտրութիւնները, այնքան երկու երկիրներուն քաղաքական մրցակից խմբաւորումները եւ արտաքին ուժերը կը փորձեն ազդել այդ ընտրութիւններուն արդիւնքին վրայ:

Երկու երկիրներուն մէջ ալ ընդդիմադիր ճակատը իր նախագահը կը մեղադրէ երկրին ընկերատնտեսական վատ վիճակին համար: Հայաստանի Ազգային ժողովին մէջ ապարդիւն ջանքեր ի գործ կը դրուին նախագահ Քոչարեանի պաշտօնազրկման համար, իսկ Պաքոնի մէջ Ալիեւի հրաժարականը պահանջող զանգուածային ցոյցեր տեղի կ'ունենան:

Ալիեւ, որ իբրեւ Ք. Կ. Պէ-ի նախկին բարձրաստիճանի պաշտօնատար փորձառու է քաղաքական կեանքին մէջ, անցեալ ամիս ցնցիչ «բացայայտում» մը կատարեց՝ նշելով, որ ինք եւ նախագահ Քոչարեան անցեալ տարի Փարիզի մէջ իբրեւ թէ համաձայնած են միջանկյալ փոխանակման շուրջ:

Նախագահ Քոչարեան անմիջապէս հերքեց լուրը եւ մեղադրեց Ալիեւը: Վերջինը կը պնդէր, որ Քոչարեան իբրեւ թէ համաձայնած է զիջումներ կատարել ի վնաս Հայաստանի հողային ամբողջականութեան:

Տարօրինակը այն է, որ Ալիեւ եւ իր օգնականները արդէն տարիէ մը աւելի է, որ յաճախ անդրդուելի-օրէն կը ժխտէին Փարիզի մէջ որեւէ համաձայնութեան հասնելու լուրերը: Միջազգային բազմաթիւ դէտեր Ալիեւը մեղադրած են փարիզեան սկզբունքներէն հրաժարելու եւ դարաբաղեան բանակցութիւնները խափանելու յանցանքով:

Ինչ ալնկալիքներ ունի ան այժմ՝ այսպիսի ուշացած մանրամասնութիւններ հրապարակելով, նաեւ քաջ գիտնալով, որ անպայման պիտի քննադատուի մէկ տարի իր ժողովուրդը խաբած ըլլալուն համար:

Թերեւս ան կը մտածէր, որ Քոչարեան քաղաքականապէս տկարացած կ'ըլլայ պաշտօնազրկման շարունակական փորձերէն ետք, եւ այսպէսով կը խափանուի անոր վերընտրութիւնը: Կամ թերեւս կը ցանկայ մոլորեցնել միջազգային ընտանիքը՝ հրամայելով այն տարբերակը, թէ Հայաստան ինք փակուղի մտցուցած է Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման բանակցութիւնները:

Եթէ նպատակը առաջինն է, պէտք է ըսել, որ Ալիեւ պարտութիւն կրեց, որովհետեւ միայն մէկ ընդդիմադիր թերթ, որ սովորաբար կը քննադատէ Քոչարեանը պատե՛հ - անպատե՛հ առիթներով, միացաւ իրեն: Գլխաւոր ընդդիմադիր կուսակցութեան նախագահ Ալպէրթ Բազէեան զարմանք պատճառեց մոլորեցնող խօսքերուն: Ազգիկն շահերը կուսակցութեան շահերէն վեր դասելով՝ ան ըսաւ. «Մենք երբեք պիտի չչարաշահենք Լեռնային Ղարաբաղի հարցը իշխանութիւնները հարուածելու կամ կառավարութեան փոփոխութեան յաւանքը բերելու նպատակով»:

Քոչարեանին քաղաքական վնաս հասցնելու փոխարէն, Ալիեւ անդապաւրբար լուրջ վնաս պատճառեց իր իսկ հեղինակութեան, ինչպէս ազգայնականացիներուն, նոյնպէս ալ աշխարհի շարք մը ղեկավարներուն առջեւ:

Ազգայնականի ընդդիմութիւնը բառացիօրէն ջղագար դարձած է մէկ տարի շարունակ հերքումներ լսելէ ետք տեղեկանալով, որ երկու նախագահները զաղտնի համաձայնութեան հասած են Փարիզի մէջ: Ազգայնականացիները խուճապի մատնուած են՝ վախճալով, որ թերեւ իրենց նախագահը այլ զիջումներ եւս կատարած է եւ համաձայնած է Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու նախագիծին: Թերթերը հարցումներ կը տեղացնեն պարզելու համար նորաճող մանրամասնութիւններ:

Ալիեւը քննադատեցին նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապին միջնորդ երկիրներու (Միացեալ Նահանգներ, Ֆրանսա, Ռուսիա) ներկայացուցիչները, որովհետեւ Ալիեւ հանրութեան սեփականութիւնը դարձուցած էր Լեռնային Ղարաբաղի զաղտնի բանակցութիւններուն մէկ մասը, անկախ անոր ճիշդ կամ սխալ ըլլալու հանգամանքէն: Ռուսիոյ արտաքին գործոց փոխ նախարար Վիաչեսլաւ Տրուպիեքով ըսաւ, որ Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման գործընթացը պէտք է օգտագործուի իբրեւ դրացի երկրի նախագահական ընտրութիւններուն վրայ ազդելու միջոց:

Ալիեւի այս փոքր, կեղտոտ խաղը հաւանաբար վնասեց նաեւ Քոչարեանի հետ իր անձնական յարաբերութիւններուն, որովհետեւ Քոչարեան յայտարարեց, որ անոր հետ յաջորդ հանդիպումը նոյնքան սիրալիք պիտի չըլլայ: Մեր աղուէսը չափէն աւելի խեղճութիւն ցուցաբերելով ինք ինչպէս է Քոչարեանի համար փորձ փոքր:

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ

«Քալիֆորնիա Բուրիլը»

ՄՈՒԹԱՖԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՄՏԱՀՈԳ՝
ԹՐԲԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԵՐՈՒ
ՆՈՐ «ԲԱՐԵՓՈՒՅՈՒՄՆԵՐ»ՈՎ

Թրքական պատմութեան գիրքերու մէջ նախատեսուող «բարեփոխումները» այս օրերուն մեծ մտահոգութիւններու դուռ բացած են Թուրքիոյ ոչ իսլամ փոքրամասնութիւններուն: Պոլսոյ հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մուսթաֆեան այս մասին կատարուած հարցազրոյցի մը մէջ այդ «բարեփոխումները» ընդթափած է «յատկապէս քրիստոնեաներու դէմ բարոզութիւն ծաւալող բաժիններ»: Ան նշած է, որ տարբեր կրօններու եւ մշակոյթներու դէմ բարոզութիւն կատարելը կրնայ վնասել ոչ միայն երկրին միջազգային հեղինակութեան, այլ նաեւ՝ տնտեսութեան:

Մեսրոպ արք. Մուսթաֆեան յայտնած է, թէ Թուրքիոյ մէջ նոյնիսկ այսօր մարդիկ կը շարունակեն «հայ» անունը իբրեւ վիրաւորանք օգտագործել, ինչ որ արդիւնք է ժամանակին որոշ շրջանակներու կողմէ թշնամութիւն սերմանելու յաջող ջանքերուն: Պատրիարքը կոչ ուղղած է կարելի կարճ ժամանակամիջոցին հրատարակութիւններէն հանել բոլոր այն բաժինները, որոնք կրնան յաւելեալ թշնամութեան պատճառ դառնալ:

նիստին, սակայն ընդդիմադիր ծերակուտակաճներու Լինչ Սթանթըն պահանջած է յետաձգել զայն՝ պատրուակելով, որ ինք եւս առիթը պէտք է ունենայ խօսք անելու յիշեալ բանաձեւին շուրջ: Բանաձեւին պաշտպան ծերակուտակաճ Մահէօ մերժած է օրակարգի յետաձգման առաջարկը՝ առարկելով, որ արդէն 2001ի Մարտին ի վեր ան մաս կը կազմէ Ծերակոյտի օրակարգին, եւ այլ լեւս պէտք է որոշում մը տալ այս գծով:

Յետ քուէարկութեան, օրակարգի յետաձգման առաջարկը ընդունուած է 39 թերեւ 20 դէմ քուէներով: Այս երեւոյթը դժգոհ ձգած է Ծերակոյտի կարգ մը անդամները եւ Հայ Դատի Քանատայի Յանձնախումբին անդամները, որոնք կրկին օրակարգի վրայ դնել կարգ մը փոփոխութիւններ մտցնելով անոր մէջ:

Հայ Դատի Յանձնախումբը եւ ծերակուտակաճներու Սթլաքուի յետ խորհրդակցութեան համաձայն գտնուած են բանակցութիւններու առաջարկին, նկատի ունենալով, որ անիկա որեւէ ձեւով թէ մը ի վեր մօտէն կը հետապնդէին քուէարկութեան գործընթացը Օթաուայի մէջ:

Շրջանցելու համար ձգձգման այս քաղաքականութիւնը Հայ Դատի Յանձնախումբին անդամները եւ ծերակուտակաճներ Մահէօ, Սթլաքուի եւ Փրիտոնո լծուած են քուէարկութեան մէջ: Երկու ժամուան ընթացքին կարելի եղած է համոզել ընդդիմադիր կարգ մը ծերակուտակաճներ, ինչպէս՝ Տընիսօ

եւ Անտորշաք, որպէսզի իրենց պաշտօնակից ընդդիմադիր Լինչ Սթանթընը հանջած է յետաձգել զայն՝ պատրուակելով, որ ինք եւս առիթը պէտք է ունենայ խօսք անելու յիշեալ բանաձեւին շուրջ: Բանաձեւին պաշտպան ծերակուտակաճ Մահէօ մերժած է օրակարգի յետաձգման առաջարկը՝ առարկելով, որ արդէն 2001ի Մարտին ի վեր ան մաս կը կազմէ Ծերակոյտի օրակարգին, եւ այլ լեւս պէտք է որոշում մը տալ այս գծով:

Յետ քուէարկութեան Հայ Դատի Յանձնախումբի պատուիրակութեան անդամները, որոնք գտնուած են Ծերակոյտի դահլիճին մէջ, շնորհաւորած են իրենց շնորհակալութիւնները յանդուր շարունակելու արտայայտել բանաձեւին:

Յետ քուէարկութեան Հայ Դատի Յանձնախումբի պատուիրակութեան անդամները, որոնք գտնուած են Ծերակոյտի դահլիճին մէջ, շնորհաւորած են իրենց շնորհակալութիւնները յանդուր շարունակելու արտայայտել բանաձեւին:



Միջազգային Քաղաքական Կեանք

ԱՌԱՋԻՆ ՌՈՒՄԲԸ

Ս. ՆԱԸԱՆԳԵՐՈՒ ԿՈՐԻՉԱՅԻՆ ՅԱՐՉԱԿՈՒՄԸ ԵՐՈՊԵՄԱՅԻ ՎՐԱՅ ԾԱՄԲԱՅ ԸՆԴՈՒՄԸ ՍԵՊՏԵՄԲԵՐ 11Ի ԴԵՊԵՆ ԵՒ ԱՆՈՐ ԸՆՏԵՒԱՆՔԵՐՈՒՆ

Հիմա, որ ԱՖղանիստանի մէջ ամերիկեան ուժաւորումներուն գոհ գացած անմեղ քաղաքացիներուն թիւը հաւասարած է Սեպտեմբեր 11ի զոհերուն թիւին, հաւանաբար կրնանք արդէն երկու դէպքերը աւելի լայն, բայց ոչ աւելի նուազ ողբերգական պարունակի մէջ դնել եւ դիմագրաւել նոր հարցում մը. արդեօ՞ք աւելի մեծ չարագործութիւն է կամ աւելի այգանելի է դիտմամբ սպաննելը, քան՝ կանոնաւոր ձեռով կոլորօրէն սպաննելը: (Կանոնաւոր ձեռով կ'ըսեմ, որովհետեւ զինեալ միջամտութիւններ կատարելու ամերիկեան ռազմավարութիւնը սկիզբ առաւ Մոցի պատերազմին): Ես չեմ կրնամ այս հարցին պատասխանը գետնի վրայ, ամերիկեան «Պի - 52»-ներուն արձակած ռումբերուն եւ Մէնհէթընի «Չըրչ Սթրիթ»էն բարձրացող հեղձուցիչ ծուխին միջեւ հաւանաբար բարոյագիտական դատողութիւններ կարելի չէ համեմատել:



Ճափոնական 66 քաղաքներ ամբողջովին կործանեցան կորիզային առաջին ռումբեր

